ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԱՊ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.06.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԱՊ-18/3» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ (ք. Երևան, Գայի պ. 1/7)
2. <<ՌԻՆՈ>> ՍՊԸ (ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մ. Մաշտոցի 27)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/	
				<<ՌԻՆՈ>> ՍՊԸ	**«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ**
1	կուտակիչ մարտկոցներ	9	180000	150000	146250
2	կուտակիչ մարտկոցներ	3	84000	67500	68750
3	ավտոմեքենաների անիվներ	4	240000		

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ 3-րդ չափաբաժնի համար ոչ մի հայտ չի ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝
1 չափաբաժնի համար **«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ –ին,**
2 չափաբաժնի համար **«ՌԻՆՈ» ՍՊԸ –ին:**

1.2 Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝
1 չափաբաժնի համար **«ՌԻՆՈ» ՍՊԸ –ին,**
2 չափաբաժնի համար **«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ –ին:**

2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն ընթացակարգի 3-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

3. Հաստատել ընթացակարգի 3-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը(կցվում է):

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պետրոսյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան